

Լուսաւորչի տօնին, շաբաթ օրն, Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցին ժողովուն, ուր եւ ժողովեցան Գաղատիոյ գրեթէ բոլոր նշանաւորները: Ինքն ամօռը նստաւ եւ երկար քարոզի մը մէջ՝ արտասուագին աչօք հետեւեալն ըսաւ. «Գիտէք իմ ոչխարներս որ Աստուած զիս ձեզի հովիւ կարգած է, ձեր առջեւն ինկած զձեզ արքայութիւն կ'առաջնորդեմ: Սրտիս մէջ հօւր մը կայ, ի վաղուց բորբոքած, բայց ես ասոր ճառագայթները ցայսօր արգելեցի, հիմայ ժամանակն է արձակելու: Այս հօւրն, սուրբ հաւատքի, սուրբ եկեղեցւոյ հօւրն է, ձեզմէ շատերը գիտեն ինչ կ'ուզեմ ըսել. չգիտցողներ ալ շատ կան, ես պարտքս կատարեմ եւ դատաստանի օրը պարտական չմնամ. Հռոմէական սուրբ եկեղեցւոյ հաւատացածին չհաւատացողներուն փրկութիւն չկայ: Այս հաւատքին սիրոյն՝ ի հարկին պէտք է ամէն տեսակ նեղութիւն, հաւածանք եւ մահ կրել, եթէ կ'ուզենք փրկուիլ:» Ժողովրդեան մէկ մասն ուրախացած, միւսը զարմացած լռութեամբ մտիկ ըրին եւ ձայն մ'անգամ չելաւ. վասն զի շատ կը յարգէին առաջնորդը:

«Ասկէ ետքը վանք գնաց, եւ հոն քանի մ'օրէն անկողին ինկաւ. խցին մէջ Տէր Սուքիաս պատարագ կ'ընէր եւ կը հաղորդէր Առաջնորդը: Այս միջոցին Ուրբանեան Գպրատան աշակերտ Մէհտէր օղլու Գէորգ Ա., իրրեւ մատրանապետ գաղղիական հիւպատոս Միւսիւ Փօրիի, Գաղատիա եկաւ եւ հիւպատոսին քով իջեւա-